

ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՆԵԱԽՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵջ (բրոնզե և երկաթե դարաշրջանների նյութերի հիման վրա)

ԽՈՒՐԱՎԵՐԴՅԱՆ Ա.ՅՈՒ¹, ԵՏԳԻՔԱՐՅԱՆ Ա.Ա.², ՎԱՐՄԱՅԱՆ Շ.Ա.³, ՄԱԹԵՎՈՍՅԱՆ Հ.Շ.², ԿԱՐԱՆՅԱՆ Չ.Ա.^{2,4}

¹ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, Հայաստան

² Երևանի Մ. Հերացու անվ. պետական բժշկական համալսարանի բժշկական կենսաբանության ամբիոն, Երևան, Հայաստան

³ Երևանի Մ. Հերացու անվ. պետական բժշկական համալսարանի դատական բժշկության ամբիոն, Երևան, Հայաստան

⁴ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մոլեկուլյար կենսաբանության ինստիտուտ, Երևան, Հայաստան

Հանձնված է՝ 15/08/2013թ., ընդունված է՝ 20/01/2014թ.

Ներկայացված աշխատանքի նպատակն է՝ ներկայացնել Հայաստանի տարածքի բնակչության մեջ բրոնզե և երկաթե դարաշրջանների մարդաբանական նյութի վնասվածքների վերլուծությունը:

Հնեախտաբանության մեջ ամենակարևոր խնդիրներից է՝ ոսկրանյութի վնասվածքների ախտորոշումը: Այդ վնասվածքները թույլ են տալիս տեղեկություն ստանալ հինավուրց հասարակության կենսապայմանների, շրջապատող միջավայրի հետ մարդու փոխադարձ կապի մասին: Կյանքի ընթացքում կմախքի վրա առկա ախտաբանական պրոցեսների և վնասվածքների առկայությունը թույլ է տալիս ենթադրել կամ ստույգ որոշել մահվան պատճառները: Երբեմն դրանք կարող են վկայակոչել մահվան տանող պայմանների մասին:

147 հետազոտված անհատից 51-ի մոտ հայտնաբերվել են բազմաթիվ վնասվածքներ: Շուրջ 37 տղամարդու (46,3%, N = 80), 13 կնոջ (28,9%, N = 45) և 1 երեխայի (5%, N = 20) մոտ արձանագրվել են կմախքի վնասվածքներ: Որոշակի կապ է նկատվում տարիքային խմբերի և զանգատուփի վնասվածքների միջև: Պարզվել է, որ վնասվածքներն ավելի հաճախ բնորոշ են 30-47 տարեկան անհատների մոտ:

Նոր Գետաշեն, Նորադուզ, Շիրակական և Լոռի-Բերդ խմբերում վնասվածքները նկատվում են մինչև 29 տարեկան անհատների մոտ, իսկ Սարուխան և Արծվաքար խմբերում՝ 40-65 տարեկանների մոտ:

Համարվում են արդյոք այդ վնասվածքները ներհասարակական բռնության (մասնավորապես՝ ընտանիքում) կամ հողի, խմելու ջրի աղբյուրների պատճառով համայնքների միջև բռնության արդյունք, դժվար է հստակ ասել:

Հայաստանի բնակչության մեջ հայտնաբերվել են բազմազան ախտաբանական փոփոխություններ: Այնպիսի հատկանիշների առկայության բարձր հաճախականությունը, ինչպիսիք են՝ *cribra orbitale*, Էմալի հիպոպլազիա և այլն վկայում են այն մասին, որ այստեղ օրգանիզմն ենթարկվել է արտաքին տևական ազդեցությունների: